

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

20 մարտի 2019թ.
ք. Երևան

N 25-Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**Թիվ 24 ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ՈՐՈՇՄԱՍԲ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Ուսումնասիրելով թիվ 24 տարածքային ընտրական հանձնաժողովի 2018 թվականի դեկտեմբերի 14-ի ««Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» և Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ հասարակական կազմակերպությունների դիմում-բողոքի մասին» թիվ 44-Ա որոշումը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Պ Ա Ր Ձ Ե Ց .

1. Թիվ 24 տարածքային ընտրական հանձնաժողովի 2018 թվականի դեկտեմբերի 14-ի ««Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» և Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ հասարակական կազմակերպությունների դիմում-բողոքի մասին» թիվ 44-Ա որոշմամբ փաստել է, որ 24/34 տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում դիտորդ՝ Արմինե Շախկյանի գնահատականը չարձանագրելու մասով թիվ 24/34 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Գարունիկ Ճարոյանը թույլ է տվել ՀՀ ընտրական օրենսգրքի 67-րդ հոդվածի 14-րդ մասի պահանջների խախտում:

Վերոգրյալի հաշվառմամբ և հիմք ընդունելով ՀՀ ընտրական օրենսգրքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի 21-րդ կետը, ղեկավարվելով ՀՀ ընտրական օրենսգրքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ թիվ 24 տարածքային ընտրական հանձնաժողովը որոշել է միջնորդել Կենտրոնական ընտրական հանձնաժողովին ուժը կորցրած ճանաչել թիվ 24/34 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Գարունիկ Ճարոյանի ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ թիվ 24/34 տեղամասային հանձնաժողովի նախագահ Գարունիկ Ճարոյանը ներկայացել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2019 թվականի մարտի 20-ի ժամը 15:00-ի նիստին և հայտնել է, որ ընդունում է, որ դիտորդը պահանջել է գրառում կատարել տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում, սակայն նա չի կատարել գրառում, քանի որ կարևոր չի համարել այն հանգամանքը, որի վերաբերյալ գնահատական է ներկայացվել դիտորդի կողմից:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովում 19.03.2019թ. ստացվել է «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» և Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ հասարակական կազմակերպությունների դիմումը, որով խնդրել են նաև քննարկել թիվ 24 տարածքային ընտրական հանձնաժողովի 2018 թվականի

դեկտեմբերի 14-ի ««Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» և Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ հասարակական կազմակերպությունների դիմում-բողոքի մասին» թիվ 44-Ա որոշմամբ ներկայացված միջնորդությունը: Դիմումին կից ներկայացվել է նաև էլեկտրոնային կրիչ՝ թիվ 24 տարածքային ընտրական հանձնաժողովի թիվ 14.12.2018թ. N 44-Ա որոշմամբ արձանագրված՝ թիվ 24/34 տեղամասային ընտրական հանձնաժողովին առնչվող դրվագի վերաբերյալ:

Վարչական վարույթի շրջանակներում առկա ապացույցների գնահատմամբ, հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Թիվ 24/34 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Գարունիկ Ճարոյանի հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ միջնորդությունը բավարարել և ուժը կորցրած ճանաչել Գարունիկ Ճարոյանի ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ օրացուցային երեք օրվա ընթացքում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱԿ**

Տ. Մ ու կ ու չ յ ա ն